ՄԵԾԱՄՈՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Է. Վ. ԵԱՆՁԱԴՅԱՆ

Արարատյան դաշտավայրի հուշարձանների շարքում Մեծամորը ուրույն տեղ է գրավում իր պաշտամունքային կոթողներով։ Միջնաբերդի հյուսիս-արևմտյան լանջի տաճարական համալիրը նոր խոսք է հեթանոսական կրոնի գաղափարախոսության ասպարեզում։ Փոքր բլրաշարքն իր տեսակի մեջ դեռևս եզակի պաշտամունքային կոթող է՝ պսակված երկնային լուսատուներ խորհրդանշող, հմայություններին ծառայող տարատեսակ պատկերներով և երկինքը դիտելու հրապարակներով։

Միջնաբերդի գագաթի ժայռակերտ հարթակներում, հյուսիսից-հարավ գծով անընդմեջ հանդիպում են պաշտամունքային կառուցվածքներ, որոնք չնայած տուժել են հետագայում քարհանքի վերածվելով և ենթարկվել ժամանակի ավերիչ գործունեությանը՝ սակայն գրված դիրքով հուշում են նրանց առաջնակարգ լինելու հանգամանքը։

Գագաթնամերձ ժայռակերտ կոթողների շարքում ուշագրավ են ջրի պաշտամունքի, կրակի, երկնային լուսատուների հետ աղերսվող ժայռապատկերները։

Տաճարական համալիրը, որը պեղվել է 1966 և 1969 թթ., բաղկացած է երկու սրբարաններից և օժանդակ կառուցվածքներից։ Հյուսիսային թևի օժանդակ կառուցվածքները, հավանաբար հանդերձարանի, պահեստի դեր են կատարել, իսկ մյուրը, որ ձվածիր մի կառուցվածք է ներսում զոհի կենդանիներ կապելու բռնակներ ունեցող սալաքարերով, զբաղեցնում է սրբարանների հարավային թևը։

Տաճարական համալիրի սրբարանները կենտրոնական դիրք են գրավում։ Դրանք քառանկյունաձև, մոտ 40 մ² պահպանված մակերեսով շինություններ են, կառուցված ժայռի կտրվածքի մեջ, կողմնորոշված՝ հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք գծով։ Սրբարանների կենտրոնում զետեղված են դեպի արևելք բարձրացող զոհասեղանները, իսկ արևելյան, հյուսիսային և հարավային պատերի տակ գտնվում են այլ կավակերտ կառուցվածքներ։

Սրբարանների կենտրոնի գետնահար զոհարանները՝ արևելյան կողմի պատվանդաններով, ժայռի մեջ փորված սկավառակաձև կրակարաններով և արևելյան հանդիպակած եզրերին՝ երկթև կոթողներով (որոնք կանգուն չէին), կից են 3/4 շրջանով բոլորաձև, բարձրադիր զոհասեղաններին, որոնք պսակված են կավակերտ հորինվածքներով, իսկ կենտրոնում ունեն սկավառակաձև կրակարան՝ այրված եղեգնի և մոխրի մնացորդներով։

Առաջին սրբարանի (հյուսիսային կողմից) բարձրադիր զոհասեղանի արևելյան եզրին դեպի վեր խոյացող կոթողներից առջևինը՝ գլանաձև-սյունանման է, իսկ հաջորդ երկու կոթողները (որոնց հյուսիսային կողմի թևերը փլված են) հիշեցնում են խիստ ոճավորված, ձեռքերը վեր պարզած մարդակերպ ֆիգուրներ, որոնց նրբիրանը շեշտված է քառանկյունի ներճկումներով

(նկ. 1)։ Զոհասեղանի բոլոր կոթողների գագաթները պսակված են թասանման գոգավորություններով։ Նման գոգավորություններ հանդիպում են նաև կոթողների հիմքի մոտ աջից և ձախից։ Զոհասեղանի թասանման գոգավորությունները տասներեքն են։

Սրբարանի հարավային պատի տակ կառուցված է քառանկյունաձև ավազան (հյուսիսային և արևելյան կողմից պսակված թասանման գոգավորություններով), իսկ դեպի հարավ տարածվում է խիստ քայքայված մակերեսով կավակերտ մի հարթակ։ Սրբարանի այս հատվածը հավանաբար ծառայել է հեղման արարողություններին։

Զոհասեղանից դեպի հյուսիս կառուցված են կրակարան և կավակերտ այլ հորինվածքներ, որոնք հավանաբար ծառայել են զոհաբերության արարողություններին։

Երկրորդ սրբարանի (նկ. 2) բարձրադիր զոհասեղանի արևելյան եզրի առջևի կոթողը դարձյալ սյունանման է, գագաթին թասանման գոգավորություն, իսկ նրանից աջ և ձախ հիմքի մոտ գոգավորվող գագաթներով ցածրադիր քառակող հորինվածքներ են արված։

Հաջորդ երկու կոթողներն ուսային կտրվածքներով, դեպի ցած մի փոքր լայնացող և հաստացող, հարթ, կավակերտ տախտակներ են (առջևի համեմատաբար փոքր տախտակը, նախկինում կոտրվել է և ընկած վիճակում մի փոքր ցած սահել)։

Սրբարանի արևելյան ժայռակերտ պատը զոհասեղանից աջ և ձախ աստիճանաձև առաջ եկող պատվանդաններ ունի։ Հարավային կողմի պատվանդանի պատի մեջ որմնախորշ է փորված։ Սրբարանի հարավային պատի երկարությամբ շարված են բարձրադիր եզրերով կավակերտ գոգավորություններ, իսկ նրանց շարունակությունը կամարաձև դեպի հյուսիս տարածվող կավակերտ մի հրապարակ է՝ խիստ քայքայված մակերեսով։ Վերջինիս հյուսիսային եզրին կից է ժայռակերտ մոտ 0,8—0,85 մ տրամագծով և 0,3 մ պահպանված բարձրությամբ գլանաձև մի երուատ, որը կամ պաշտամունքային որևէ կոթողի համար պատվանդանի դեր է կատարել, կամ էլ, որ ավելի հավանական է, զոհաբերվող կենդանին մորթելու պատվանդան է եղել, այսինքն՝ զոհ մատուցելու պատվանդան։

Զոհասեղանի հյուսիսային կողմում, կավակերտ կրակարանն է, որի մեջ հայտնաբերված սաջը հնարավորություն է տալիս մտածելու, որ նրանով ծիսական հաց են թխել։ Հօգուտ ասվածի են վկայում կրակարանից մի փոքր հյուսիս, հատակին, շարժական պաշտամունքային կրակարանի բեկորների մոտ հայտնաբերված կլոր հաց հիշեցնող կավե իրն ու համակենտրոն շրջաններով զարդարված կավե բլիթը, որոնք, անշուշտ, ծիսական հաց են խորհրդանշել և որպես «մասունք» պահվել սրբարանում։

Կրակարանից դեպի հյուսիս, ինչպես և հյուսիսային պատի տակ, պահպանվել են կավակերտ յուրօրինակ հորինվածքներ (նկ. 2), որոնցից մեկի համար պատի դեր է կատարել քառանկյունաձև լայնադիր մեծ աղորիքը։

Զոհասեղանի մոտ, հյուսիսային կողմում, դրված է եղել երկարավուն, բարձրադիր կավե շարժական պատվանդան-կրակարանը, որի բեկորները հայտնաբերվեցին տեղում, իսկ հարավային կողմում գտնվեց լայնաբերան, ակոսազարդ մեծ կավամանը՝ կերակուրի մնացորդներով։

Սրբարաններն ընդհանրապես աղքատ էին սպասներով։ Հայտնաբերված վերոհիշյալ իրերը, ինչպես նաև I սրբարանում գտնված փիրուզագույն ջնարակած կոճակն ու տանձաձև կախիկն իրենց զուգահեռներն ունեն մ. թ. ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբի մշակույթում։ Շերտագրական որոշ տվյալներ նույնպես հավաստում են, որ Մեծամորի տաճարական համալիրը գոյատևել է մ. թ. ա. X դ. մինչև VIII դ. սկիզբը։ Ուրարտացիների կողմից Մեծամորը նվաճվելուց հետո (մ. թ. ա. VIII դ. 80-ական թվականներին) այդ համալիրը լքվել է և նրա արևմտյան հատվածի վրա է կառուցվել ժամանակով ավելի երիտասարդ ուրարտական պաշտպանական պարիսպը։ Իսկ ինչպիսի՞ն է եղել համալիրի արևմտյան հատվածը։ Արդյո՞ք սրբարաններն ունեցել են նախասրահ կամ դեպի մուտքը տանող սրբազան, բարձրադիր աստիճաններ, որոնք այնքան բնորոշ են Հայկական լեռնաշխարհի հարևան՝ Հին Արևելյան երկրների պաշտամունքային հուշարձաններին։ Դժվար է, որևէ բան հաստատել, քանի որ համալիրի այդ հատվածը ոչնչացվել է պաշտպանական պարսպի և նրա տակ ավելի ուշ շրջանում կատարված կառուցումների ժամանակ։

Հատուկ ուշադրության են արժանի զոհասեղանների արևելյան եզրին կանգնեցրած կոթողները։ Առաջին սրբարանինն, ինչպես տեսանք, խիստ ոճավորված մարդակերպ ֆիգուրներ էին։ Նրանց անմիջական զուգահեռները շիկավուն և սև տուֆից հայտնաբերվել են Կարմիր բլուրի նախաուրարտական շերտերի բնակարաններում՝ օջախի կամ հացահատիկի հորի, հացահատիկով լեցուն կավամանների մոտ, ուղղահայաց կանգնած վիճակում և թվագրվում են մ. թ. ա. XIII—VIII դդ.[1]։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ բացի Կարմիր բլուրից, բնակարանի պաշտամունքային անկյունում նման կավակերտ եռաթև կոթողներ՝ ծիսական կրակարանով հայտնաբերվել են նաև Հայկական լեռնաշխարհից հյուսիս, մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով թվագրվող՝ Խովլեյի (Ախալքալակից մի փոքր արևմուտք)[2] և Դիղոմիի (Թբիլիսիից հարավ)[3] բնակատեղիներում։ Չնայած նրանք մանրամասներով տարբերվում են Մեծամորի կոթողներից, սակայն հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ թե՛ Կարմիր բլուրինը և թե՛ վերոհիշյալները ծառայել են միայն տվյալ ընտանիքին, իսկ Մեծամորում դրանք ներկայացված են որպես բնակատեղիի ողջ բնակչության կրոնական ծիսակատարությունների տաճարական համալիրի բաղադրիչ մասեր։

Ինչպես վերոհիշյալ կոթողներն, այնպես էլ Մեծամորի զոհասեղանի ֆիգուրներն իրենց ձևով հեռավոր կերպով հիշեցնում են նեոլիթյան թևերն ու ոտքերը վեր պարզած աստվածուհուն՝ պատկերված Ջաթալ-Հույուկի սրբարանների պատերին, աստվածուհի, որը ինչպես Ջ. Մելաարտն է արտահայտվում. «կարծես ծնունդ է տալիս ցուլի», որի գլուխը պատրաստված է աստվա-

---

[1] В. Сорокин, Древние идолы города Тейшебаины («Տեղեկագիր» № 5, Երևան, 1951, էջ 71—82, նկ. 1, 2, 4, 5), А. Мартиросян, Идолы из раскопок Кармир-Блура («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1958, № 2, էջ 114—138)։

[2] Պեղումները՝ Դ. Մուսխելիշվիլու, նյութերը հրատարակված չեն։

[3] Պեղումները՝ Ռ. Արրամիշվիլու։

ծուհու քանդակի սակ[4]։ Ցուլն աստվածուհու հետ կապակցված հանդես է գալիս նաև վաղ տրիպոլյան մշակույթում[5]։

Այսպիսով, մայր աստվածուհու, պտղաբերության աստվածուհու պաշտամունքը հնագույն ժամանակներից ի վեր աղերսվել է ցուլի հետ։ Հետագայում մեզ մոտ Անահիտ աստվածուհին է, որ համարվում է ցլապահ դիցուհի և, ինչպես մատենագիրներն են վկայում, նրա մեհյանի շուրջը բազմաթիվ սրբաղան ցուլեր էին պահում զոհաբերության համար[6]։

Ցուլը հնագույն ժամանակներից ի վեր ճանաչվել է որպես ուժի մարմնավորում, սերտորեն աղերսվել է երկնային ջրերի, պտղաբերության, վերածննդի հետ։ Այն աստվածացվել և երկինք է բարձրացվել, ստացել աստղային տիեզերական բնույթ, որպես երկրագործությանը հովանավորող աստվածություն, որպես ջրի տարերքի հետ կապված երևույթների համակցություն[7]։

Հին արևելյան շատ ժողովուրդների մոտ ցուլը համարվել է նաև կայծակի և որոտի աստծո խորհրդանիշերից մեկը, որն իր եղջյուրներով պատառոտելով չար ամպերը, անձրև է թափում երկրի վրա։

Այսպիսով, Չաթալ-Հույուկի աստվածուհին հավանաբար ծնունդ է տալիս կայծակի և ամպրոպի աստվածությունը խորհրդանշող, երկնային ջրեր պարգևող ցուլին։

Իսկ ի՞նչ աստվածներ են խորհրդանշել Մեծամորի զոհասեղանի կոթողները կամ ո՞ր աստվածությանը նրանք պետք է ծնունդ տային։ Առայժմ բավականին դժվար է այդ հարցին պատասխանելը։ Ավելորդ չէ նկատել, որ զոհասեղանների կոթողներն իրենց ամբողջության մեջ կարող են արտահայտել հիմնականում եռաստվածության գաղափարը։ Երկու մարդակերպ ֆիգուրները հավանաբար աստվածություններ են, որոնք պետք է ծնունդ տային երրորդ աստվածությանը, որի խորհրդանիշը բրգաձև կոթողն է։

Արդյո՞ք դրանք բուսական աշխարհը հովանավորող աստվածուհու և կենդանական աշխարհի տիրուհու խորհրդանիշները չեն, որոնք կոչված են ծնունդ տալու պտղաբերությունն ապահովող աստծուն, երկրագործության, պտղի, հացահատիկի, բուսական աշխարհի և կենդանական աշխարհի հովանավորող աստծուն։ Կամ գուցե նրանք մեր առասպելներում պահպանված երկինք՝ հայր աստված և երկիր՝ մայր աստվածուհին են, որոնք պետք է երկնեին մի նոր աստվածություն։

Հ. Մատիկյանի մոտ կարդում ենք. «Երկինքը ընդհանրապես միշտ արական ըմբռնուած է..., իրեն ամուսինն է առ հասարակ երկիրս, զոր ընդհանրապէս անձրեւով կարգասաւորէ եւ կը պտղաբերէ»[8]։

Անժխտելի է այն հանգամանքը, որ Մեծամորի տաճարական համալիրում պտղաբերություն հայցող ծիսակատարություններ են արվել։

Համալիրի թասանման գոգավորություններն, անշուշտ, աղերսվել են կենարար ջրի պաշտամունքի հետ և հավանաբար կոչված են եղել երկնային ջրերը հմայելուն, դյութելուն։ Հին ժամանակներում հմայաթասերը դեպի երկինք պարզելը կապված է եղել պտղաբերության, վերածննդի գաղափարի

[4] J. Mellaart. Excavations at Çatal-Hüyük, 1962. AS. vol. XIII, 1963, p. 62, 69 t. IX, fig. 8, 14, 18.

[5] Т. Мовша, Святилища трипольской культуры (СА, № 1, М., 1971, стр. 203).

[6] Плутарх, Лукулл XIV, Сравнительные жизнеописания. т. II, М., 1963, стр. 192.

[7] Է. Խանզադյան, Դառնի, IV, Երևան, 1967, էջ 145—146։

[8] Հ. Մատիկյան, Կրոնի ծագումը և դիցաբանութիւն, Վիեննա, 1920, էջ 250։

հետ[9]։ Հմայաթասերն ընդհանրապես մեծ վաղեմություն ունեն. Շումերում հայտնի են սկսած մ. թ. ա. V հազարամյակից[10], Տրիպոլյան մշակույթում մ. թ. ա. III հազարամյակից[11]։ Թասանման գոգավորությունները հատկանշական են Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի գրեթե բոլոր պաշտամունքային կավակերտ կոթողներին՝ թրծած կավից պատրաստված շարժական օջախներին, օջախների շարժական հենակներին, խոյագլուխ հենակներին, երկկոնաձև կանթեղներին[12]։

Ջուրը և կրակը, ջերմությունը հնագույն ժամանակներից ի վեր պտղաբերության անհրաժեշտ պայմաններն են ճանաչվել։ Ջուրը և կրակը, խոնավությունն ու ջերմությունը տարվա եղանակների փոփոխություն, անձրև, առատ բերք և կենդանի էակների աճ սպասող երկրագործ-անասնապահների գազափարաբանության կարևորագույն գործոններն են հանդիսացել։ Պարզ է, որ վերոհիշյալ սրբարաններում, նրանց երևակայությամբ ստեղծված աստվածությունները կոչված պետք է լինեին երկնային խոնավությամբ և ջերմությամբ երկիրն արգասավորելու և պտղաբերությունն ապահովելու։

Ինչ վերաբերում է II սրբարանի բարձրադիր զոհասեղանի կոթողներին, ապա դրանք իրենց ձևով առայժմ եզակի են, ինչպես վերը նշվեց՝ ուսային փորվածքներով հարթ, կավակերտ տախտակներ— ստելաներ են, չափերով միմյանցից մի փոքր տարբեր։ Թվում է, թե դրանք նույնպես խիստ ոճավորված, վերացարկված մարդակերպ ֆիգուրներ են։

Կավակերտ տախտակներ— ստելաներ բնորոշ են Անատոլիայի մի շարք հուշարձաններին։ Քյուլ-թափայի Iб ժամանակաշրջանի (մ. թ. ա. 1850—1800 թթ.) երկու սրբարաններում հայտնաբերվել են կավակերտ ստելաներ, A սրբարանում այն քառակուսի փորվածքի մեջ է կանգնեցվել, իսկ B-ում՝ հեղման համար քարե չանի առջև, որը կանգուն է մնացել նաև հաջորդ ժամանակաշրջանում՝ IA-ում[13]։

Կուզուրի մ. թ. ա. XIII դարի սրբարանի կավակերտ հատակի վրա ստելա է կանգնեցված եղել[14]։ Նման ստելաներ բնորոշ են նաև Խազարի սրբարանին[15]։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Բողազքեոյի մ. թ. ա. XIV—XIII դդ. սրբարանները, որոնցից մեկում կանգնեցված է Թութխալիա III-ի կամ IV-ի ստելան[16]։ Կարա-Հույուքի սրբարանի (մ. թ. ա. 1200 թ.) տաշտանման ավազանի առջև կանգնեցված է եղել ստելա՝ արձանագրությամբ[17]։

Այսպիսով, Մեծամորի սրբարանները հար և նման են միմյանց, մեկ համալիր են կազմում, սակայն, ինչպես տեսանք, որոշ մանրամասներով տարբերվում են միմյանցից։

---

9 Б. Рыбаков, Космогония и мифология земледельцев Энеолита (СА, № 1, 1965, стр. 26).

10 J. Mellaart, Earliest civilisations of the Near East, London, 1965, p. 66, fig. 40 j.

11 Б. Рыбаков, նշվ. աշխ., նկ. 1—43։

12 Է. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, աղ. XV, XVI։ Նույնի, Գառնի, IV, աղ. XXI։

13 W. Lamb, Some Early Anatolian Shrines, AS, VI, 1956, p. 88.

14 Նույն տեղում, էջ 89։

15 Նույն տեղում, էջ 93։

16 Նույն տեղում, էջ 92—93։

17 Նույն տեղում, էջ 93։



Նկ. 1. Առաջին սրբարանը (վերականգնված).

Նկ. 2. Երկրորդ սրբարանը (վերականգնված)

Մեծամորին ժամանակակից հեթանոսական սրբարաններ կավակերտ զոհասեղաններով հայտնաբերվել են Դվինում, Սարի Թեփեում, Նացար-Գորայում։

Դվինի զոհասեղաններից մեկը նույնպես բարձրադիր է, մոխրով լեցուն կենտրոնական կրակարանով և նրա առջև ուղղահայաց կանգնեցված կավե տախտակով[18]։ Տախտակի վերին մասում մեկ շարքով պատկերված են երեք ռելիեֆ ոճավորված մարդակերպ դեմքեր, որոնք, անշուշտ, եռաստվածության խորհրդանիշն են։ Նրանցից ցած տախտակը զարդարում են երկրաչափական զարդամոտիվներն ու գալարվող ռելիեֆ օձը։

Դվինի մյուս զոհասեղանի կավե տախտակի վերին շարքում պատկերված են յոթ աստվածություններ խորհրդանշող դեմքեր, խոյի գլուխներ, որոնցից ցած տախտակը զարդարում են հասկի, հատիկի զարդամոտիվներն ու գալարվող օձի ռելիեֆ պատկերը[19]։

Այսպիսով, ինչպես տեսանք, նույն ժամանակաշրջանի Արարատյան դաշտավայրի Մեծամորին զուգահեռ մեկ այլ սրբարանում կանգնեցվել են կավակերտ զոհասեղաններ, աստվածություններ խորհրդանշող տախտակներով՝ կատարված արտահայտչական այլ եղանակով։

Մեծամորին ժամանակակից սրբարան հայտնաբերվել է նաև Սարի-Թեփե (Աղստևի հովիտ) բնակատեղիի «հրդեհված» շերտում, որը թվագրվում է մ. թ. ա. I հազարամյակի I դարերով[20]։

Կավակերտ կառուցվածքներ կիսաշրջանաձև գոգավորություններով հայտնաբերվել են Սարի-Թեփեի սրբարանի հյուսիսային և հարավային պատերի երկայնքով[21]։ Դրանցից մի քանիսում դրված են եղել տարատեսակ կավամաններ՝ օրգանական մնացորդներով[22]։

Մեծամորին ժամանակակից հետաքրքրական սրբարաններ հայտնաբերվել են նաև Հարավային Օսեթիայում (Ներքին Քարթլիա), Նացար-Գորա բնակատեղիում[23]։ Նրանց նույնպես բնորոշ են բարձրադիր զոհասեղաններ սկավառակաձև կրակարաններով և առջևում բարձրացող կոթողներով, թասանման գոգավորություններով[24]։

Մեծամորի սրբարանների սկավառակաձև կրակարաններում ծիսակատարությունների ժամանակ սրբազան հուրն է բոցկլտացել, իսկ փոքրիկ թասանման գոգավորություններում, հավանաբար, քրմերը և քրմուհիները հանդիսավորությամբ խունկ են ծխել, թարմ և սառը ջուր են լցրել, գավաթներով ըմպելիք դրել՝ երկնային ջրերը հմայելու, դյութելու նպատակով։ Շոգ երկրր-

---

18 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, № 2 (33), էջ 55, նկ. 5)։

19 Նույն տեղում։

20 И. Нариманов, Дж. Халилов, Археологические раскопки на холме Сары-тепе (1956), Материальная культура Азербайджана, IV, Баку, 1962, стр. 44.

21 Дж. Халилов, Поселение на холме Сары-тепе, СА, № 4, М., 1960, стр. 69.

22 Նույն տեղում, նկ. 1։

23 Г. Гобеджишвили, Холм Нацар-гора близ гор. Сталинири, Мимохивели, 11, Тбилиси, 1951, стр. 272—276.

24 Նույն տեղում, աղ. XIV 2։

ներում ջրի հեղման ծիսակատարությունը միաժամանակ ճանաչվել է որպես հաջողության խորհրդանիշ[25]։

Ծիսակատարությունների ժամանակ խունկ ծխելու և հոտավետ յուղեր այրելու սովորությունը գալիս է դեռևս շատ հնուց։ Օրինակ, Ուրի III դինաստիայի հավատացյալների զոհաբերությունների նկարագրական տեքստերում ասվում է. «Ես յոթ տեսակի անուշահոտ յուղեր... այրում էի յոթ կրակարանների վրա...»[26]։

Անշուշտ յոթ լուսատուների պաշտամունքի հետ է աղերսվել Մեծամորում հայտնաբերված յոթփողանի ջահը՝ «կերնոսը» (նկ. 3)։

Նկ. 3. Յոթփողանի ջահ՝ «կերնոս»։

Մեծամորի սրբարաններում խնկարկումը կատարվել է նաև բրոնզե բուրվառներով, որոնցից մեկը՝ արծվագլուխ կանթերով՝ հայտնաբերվել է «Քուրմի դամբարանում»։

Զոհաբերությունն իր էությամբ աստվածների կերակուրն է համարվել, որը պետք է պատրաստվեր զոհի կենդանու մսից. այն խորովում էին կրակի վրա կամ եփում թաղարներում։

Ընդունված է եղել նաև աստծուն հաց մատուցել և նրա արձանի առջև գինի հեղել[27]։ Մեծամորում նման արարողություններ հավաստող նյութական ապացույցներից կարելի է համարել ծիսական հաց նախշող դաճեր-դրոշմիչները (նկ. 4), ինչպես տեսանք, II սրբարանի կավակերտ բլիթներ-հացերը՝

25 Д. Т. Редер, Мифы и легенды древнего двуречья, М., 1965, стр. 113.
26 Л. Вулли, Урхалдеев, М., 1961, стр 162.
27 Նույն տեղում, էջ 110։



Նկ. 4. Կավե դրոշմիչ

Նկ. 5. Պաշտամունքային սափոր կանթով

հացահատիկ տրորելու, աղալու, ալյուր ստանալու աղորիքը և ծիսական հաց թխելու կրակարանն ու սաջը, ըմպելիքի համար՝ երկարավիզ նրբագեղ սափորները, որ հայտնաբերվել են միջնաբերդի արևելյան լանջի կենտրոնական հրապարակի պաշտամունքային կառուցվածքում (նկ. 5)։

Սրբարաններում պտղաբերության հետ կապված ծիսակատարությունների ժամանակ, անշուշտ, տեղ են գտել նաև նվիրաբերվող և օրհնվող հացահատիկներ, ալյուր, տարատեսակ բուսական մթերքներ, պտուղներ, որոնց համար մթերանոցների դեր են կատարել պատերի տակ կառուցված վերոհիշյալ կավակերտ յուրօրինակ հորինվածքները։ Նրանցում չնայած մթերքների մնացորդները բացակայում են, սակայն, ինչպես տեսանք, զուգահեռ հուշարձաններում (Սարի-Թեփե), կավակերտ կառուցվածքներում պտուղների, մրթերքների մնացորդների առկայությունը հավաստում են դրանց գոյությունը նաև Մեծամորի սրբարանում։

Նկ. 6. Օձազարդ կարասիկ

Բացի այդ, Մեծամորի միջնաբերդի արևելյան կողմի վերին հրապարակի պաշտամունքային կառուցվածքում հայտնաբերված, հացահատիկով լեցուն դնդաձև կարասիկներն, անշուշտ, ծիսական արարողությունների են ծառայել։ Այդ գնդաձև, անվիզ, կլորացող պսակով սև փայլեցրած կարասիկների հիմնական զարդանկարը գալարվող օձն է (նկ. 6)։ Այն կարասիկի վրա երևան է գալիս զարդանախշերի տարբեր միջավայրում, որոնք հուշում են նրա պաշտամունքային հատկանիշները։

Ժողովրդական հավատալիքներում օձն աղերսվել է ջրի պաշտամունքի հետ[28], համարվել նաև երկրագործության հովանավորող՝ մկների, առնետների ոչնչացնող, այգիների, դաշտերի, պտղի և բուսականության պաշտպան[29]։

Մեծամորի կարասիկների վրա էլ այն հիմնականում ներկայացված է որպես պտղի, հացահատիկի հովանավորող, որպես սրբազան հեղուկի պահապան, բնության զարթոնքի, վերածննդի խորհրդանիշ։

Պաշտամունքային օջախների մոտ, սրբատեղիներում հացահատիկով լեցուն կարասների առկայությունը Հայկական լեռնաշխարհում բնորոշ է սկսած մ. թ. ա. III հազարամյակից։ Հացահատիկով լեցուն կարասներ հայտնաբերվել են Շենգավթի կացարաններում՝ պաշտամունքային կլոր օջախների մոտ[30], Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիների կացարաններում, մարդակերպ կուռքերի և օջախների մոտ[31] և այլուր։

Մեծամորի տաճարներում, սրբարաններում, անշուշտ, կանգնեցվել են

Նկ. 7. Մարդակերպ քարե կուռք

Նկ. 8. Կանացի արձանիկ կավից

նաև կուռքեր, աստվածությունների կավե և քարե արձաններ, որոնց խոսուն վկաներն են պատահականորեն հայտնաբերված մարդակերպ քարե կուռքն ու կանացի կավե արձանիկը։

---

28 Է. Խանզադյան, Գառնի, IV, էջ 148—149։

29 Վ. Խաչատրյան, Խեթական բևեռագիր տեքստերի գաղտնիքները («Գարուն», Երևան, 1967, N 8—9, Երևան, 1967, էջ 67)։

30 Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 74.

31 А. Мартиросян, Город Тейшебании, Ереван, 1961, стр. 74.

Մեծամորի կուռքը Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված դեռևս միակ ամբողջական, նախաուրարտական ժամանակաշրջանի ծավալային քանդակն է (նկ. 7)[32]։ Աչքի է ընկնում պարզունակ ձևով և կերտվածքով, իր ուրույն ոճային առանձնահատկություններով։ Դեպի ցած կոնաձև լայնացող գլխամասն ավարտվում է բարձրաքանդակ երկարավուն ծնոտով, ռելիեֆ շեշտված քիթը բերանի մոտ ձուլվում է դեմքին։ Աչքերը փոքր են, կլոր և ոչ խորը, բերանը հորիզոնական ճեղքով է արտահայտված, ունի վզնոցներ, ձեռքերի փոխարեն ոչ մեծ ելուստներ են արված։ Գլխի երկու կողմում կլոր խորաքանդակ շրջանով ականջներն են պատկերված, որոնցից կախված են ականջօղեր՝ յուրաքանչյուրն իրար մեջ հագած մեծ և փոքր համակենտրոն շրջաններով արտահայտված։ Գլխի ետևի մասում խորաքանդակ գծերով մազերն են պատկերված։

Կուռքի գլխամասում ծոծրակի և ձախ կողմի վրա մեծ անցք է փորված. նման մի անցք կա նաև քանդակի ստորին մասում։ Անշուշտ այդ անցքերը արվել են հետագայում, կուռքի կործանումից հետո, երբ այն պառկած վիճակում է եղել։ Գլխամասում անցքը փորելիս վնասվել են ձախ կողմի ականջը և ականջօղերի մի մասը։ Անցքերը հավանաբար զոհ մատուցվող կենդանիներին կապելու նպատակով են արվել։

Կոթողի ստորին մասը հարթ չէ և հավանաբար այն ժամանակին հագցված է եղել պատվանդանի մեջ և դրվել սրբարաններից որևէ մեկում։

Ուշագրավ է աջ ականջի վրայի սվաստիկայի նշանը։ Այն հավանաբար տվյալ աստծու կամ ոգու խորհրդանիշն է։ Հետաքրքրականն այն է, որ սվաստիկայի նշան են կրում Հայաստանում հայտնաբերված մի շարք արձաններ։ Օրինակ՝ Կարմիր բլուրում հայտնաբերված կուռքի ականջին սվաստիկա է պատկերված[33]։ Նման մի սվաստիկա է նկարված նաև Սիսիանի շրջանի Յայլի գյուղի քանդակի ճակատին[34]։ Այն հստակորեն կատարված է Նոյեմբերյանում հայտնաբերված արձանիկի ճակատին[35]։

Հին Արևելքում քիչ չեն մագիկ նշաններով և սիմվոլներով ծածկված կուռքերը։ Ուշագրավ են Հարավային Իրանի Տալի-Բակուն բնակատեղիում հայտնաբերված արձանիկները սվաստիկայի և խաչի նկարներով՝ կատարված մեջքին և ուսերին[36]։

Մեծամորի կոթողի վրա պահպանվել են երկնագույն ներկի բազմաթիվ հետքեր, որոնք հնարավորություն են տալիս ենթադրելու, որ կուռքը ժամանակին ներկված է եղել երկնագույն, որը և հուշում է սրբարանում տեղադրված լինելը։

Այսպիսով, սահմաններում աստվածների, կուռքերի և նախնիների արձանները կանգնեցնելու սովորությունը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից ի վեր։ Այդ ավանդույթի հարատևման

---

32 Լ. Բարսեղյան, Ուշ բրոնզի էպոխայի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, № 3, էջ 259, նկ. 2)։ А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964. стр. 179—180, рис. 74_1.

33 С. А. Есаян. (археологичсекий очерк), Ереван, 1969, табл. 36.

34 Բ. Ն. Առաքելյան, Քանդակագործությունը հին Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 1, էջ 60, նկ. 5)։

35 Ձեռք է բերվել Ս. Նսայանի կողմից։

36 E. Herzfeld, Iran in the Ancient East, London. New-York, 1941, p. 11.

ապացույցներին հանդիպում ենք մեր մատենագիրների հիշատակություններում։

Մովսես Խորենացու վկայությամբ՝ Արմավիրի տաճարում են կանգնեցվել Արևի, Լուսնի և թագավորի նախնիների կուռքերը[37]։ Բազմաթիվ նման տվյալներ պահպանվել են նաև Ագաթանգեղոսի մոտ (Անահիտի, Նունեի, Միհրի, Վահագնի, Աստղիկի, Ամանորի, Վանատուրի, Տիրի վերաբերյալ)[38]։

Պատահական հայտնագործություն է նաև Մեծամորի կավե մասսիվ արձանիկը (նկ. 8)[39]։ Այն չնայած թերի է, սակայն զգացվում է, որ քանդակված է եղել նստած դիրքով։ Զվածիր ընդգծված հարթ դեմքը զարդարում է բարձրադիր երկթեք քիթը։ Աչքերը և բերանը ծակած են։ Ճակատի մասը բավականին նեղ է, վերին, աջ մասում այն թեք կտրվածք ունի՝ զարդանկարված խորաքանդակ գծերով, որոնցով ճակատի մազերն են պատկերվել։ Վզին ունի ռելիեֆ, խոշոր, ոլորուն ուլունքաշար։ Կրծքին, կենտրոնական մասում, մանյակից ցած փորագրված է քառանկյունի, հավանաբար կրծքակալ պատկերող մի զարդանկար։ Կրծքակալից աջ և ձախ ուղղահայաց իջնող թեք ակոսաշարով պատկերված են ծամերը։ Ուսերի եզրագիծն արտահայտված է հատիկաշարով, որոնցով, հավանաբար, պատկերել են զգեստը։

Արձանիկի իրանի երեք կողմում՝ մեջքին, աջ և ձախ, փորված են հատիկներ։

Այսպիսով, արձանի շրջազգեստը, իրանի զարդանկարը հացահատիկով են արտահայտված։ Այստեղ ընդգծված է կավե արձանիկի սերտ կապը հացահատիկի, բուսականության խորհրդանիշի և նրա բազմիցս կրկնությունների հետ։

Հավանաբար Մեծամորի արձանիկը ներկայացնում է պտղաբերություն հովանավորող կին աստվածուհու վերացական կերպար, որը բավականին զարգացած և բարդ կրոնական պատկերացումների նյութական արտացոլումն է։

Նման արձանները պաշտամունքային նշանակություն են ունեցել և օգտագործվել հանդիսավոր ծեսերի, անդամ նզովքի, անեծքի արարողությունների ժամանակ։

Հացահատիկի հետ կապված աստվածուհիների կավե արձանիկները մեծ վաղեմություն ունեն։ Չաթալ-Հույուկի նեոլիթյան շերտերում նման արձանիկներ գտնվել են հացահատիկի և սերմերի միջավայրում, իսկ մեկ անգամ էլ՝ հացահատիկի շտեմարանում[40]։

Շումերի գլխավոր աստվածուհիները իրենց ֆունկցիաներով երբեմն կապվել են նաև հացահատիկի հետ։ Օրինակ՝ իմաստության աստվածուհի Նիդաբան աղերսվել է նաև հացահատիկի հետ և համարվել անգամ հացաբույսերի ոգի[41]։ Սակայն Շումերացիներն ունեցել են նաև հացահատիկի հատուկ աստվածուհի, որին անվանում էին Աշնան[42]։

---

37 Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 110։

38 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 409—422, 435։

39 Լ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 259, նկ. 3։

40 J. Mellaart, Excavations at Catal-Hujyk, AS, vol. XIII, 1963, p. 95.

41 E. Dhorme, Les religions de Babylionie et d'Assyrie, „Mana", II, 1949, Paris p. 136.

42 С. Н. Крамер, История начинается в Шумере, стр. 134.

Ավելի ուշ շրջանում հելլենական Հունաստանի Դեմետրա աստվածուհին, որը կրել է «Մայր հացահատիկ» անունը, աղերսվել է հատկապես պտղաբերության, հացահատիկի պաշտամունքի հետ։ Դեմետրայի սերտ կապը պտղաբերության, երկրագործական ծեսերի հետ իրենց արտացոլումն են գտել հրուշակավոր Էլեվսինյան խորհրդածեսերում[43]։

Հին Արևելքում կին աստվածուհիների պատկերագրությունների մի շարք տիպեր են գոյություն ունեցել։ Կանոններ են գրվել այդ արձանիկների պատրաստման համար։ Այդ տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Աշուրնասիրպալի գրադարանում հայտնաբերված մագիկ նշանակություն ունեցող տեքստերում մարդակերպ կավե արձանիկների պատրաստմանը վերաբերվող հրահանգը, որտեղ նշվում է, թե ինչպես անվանել նրանց, ծիսական հագուստի կանոնիկ պատկերման և աստվածային իշխանությունն արտահայտող ակսեսուարների ներկայացնելու եղանակը, նշվում է անգամ, թե ինչ դժբախտություններից են նրանք օգնում, թե ինչ թովչանք, երգում են նրանց համար արտասանվում[44]։ Որոշվում է նաև, թե որտեղ պահվեն այդ ֆիգուրները՝ «սրբարանի գլխամասում», «ծիսակատարության սենյակի շեմին», «տան հիմքում»[45] և այլն։

Մեծամորի արձանիկի կրծքակալը և վզնոցն անշուշտ հատուկ ծիսազգեստի անհրաժեշտ մասն են ներկայացրել։ Այս օրինակով կարելի է ենթադրել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, Հայկական լեռնաշխարհում ևս աստվածությունների, կուռքերի պատրաստման ընդունված հատուկ ձև, կանոններ են գոյություն ունեցել։

Այսպիսով, Մեծամորի վերոհիշյալ ինքնատիպ սրբարաններում զոհաբերություններով արարողություններ են կատարել, շուր աղերսելով և առատ բերք հայցելով։

Հայկական լեռնաշխարհի և ընդհանրապես Անդրկովկասի պաշտամունքային կոթողների շարքում Մեծամորում հայտնաբերվածը՝ դեռևս միակ տաճարական համալիրն է իր օժանդակ կառուցվածքներով հանդերձ։

Համալիրի հատակագծային և կառուցվածքային որոշ հատկանիշներ, օրինակ՝ սրբարանների և զոհասեղանների կողմնորոշումը հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք գծով, զոհասեղանների կենտրոնական դիրքը և պաշտամունքին ծառայող այլ կառուցվածքներ ենթադրել են տալիս քրմական դասի կողմից հոգևոր ծեսերի և ավանդույթների պահանջներին համաձայն մշակված հատուկ կանոնների գոյությունը։

Երբ այս հոդվածն արդեն տպագրվում էր, տաճարական համալիրի արևմտյան հատվածի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին նոր սրբարաններ։ Պարզվեց, որ վերը ներկայացվածների մուտքը, ինչպես ենթադրվում էր, եղել է արևմտյան կողմից։ Նոր հայտնաբերված սրբարանները մեկ հարթակով ցածր են նախորդներից և նրանց հետ հաղորդակցվում են քարե աստիճաններով։

Սրբարանները տուժել են հրդեհից։ Նրանց արևելյան պատի կենտրոնական հատվածներում հայտնաբերվեցին դարձյալ կավակերտ զոհարաններ

---

43 Н. И. Новосадский, Елевсинские мистерии. СПб., 1839.

44 O. Gurney, Babilonian Prophylactic figures and their Rituals, Univesity of Liverpool, 1935, v. XXII, № 1—2, p. 65—71.

45 Նույն տեղում։

խիստ ոճավորված մարդակերպ կոթողներով, որոնց աչքերն արտահայտված են համակենտրոն ռելիեֆ շրջաններով, իսկ ծնոտները կիսաշրջանաձև փորվածքով։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում սրբարանների կառուցողական այլ մանրամասները։ Տաճարական համալիրը դեռևս ամբողջացված չէ, պեղումները շարունակվում են։ Ամբողջական նյութը կներկայացվի մեկ այլ անգամ։

КУЛЬТОВЫЕ ПАМЯТНИКИ МЕЦАМОРА

Э. В. ХАНЗАДЯН

Резюме

Мецамор выделяется своими памятниками религиозного назначения. Мецамор богат скальными культовыми сооружениями. Они расположены вдоль вершинной полосы цитадели и, по всей вероятности, предназначены для служений, посвященных небесной и родниковой воде, небесным светилам.

На скальной площадке северо-западного склона цитадели раскопан комплекс святилищ конца II — начала I тысячелетий до н. э.

В Мецаморе были обнаружены культовые сосуды, утварь и предметы религиозных обрядов.

Памятники Мецамора дают возможность восстановить типы строительных сооружений религиозного назначения и представить обряды жертвоприношений в эпоху поздней бронзы и раннего железа на территории Армянского нагорья.